հայեցեալ, որ առաջինն Սրապիոն էր անուն նորա, կաթուղիկոս Էջմիածնի»(1)։

2. Թղ. 29ա–47բ. «*Ներբողեան ի վերայ մահուան Տեառն Սրապիոնի որ եւ Դրիգոր կաթուղիկոսի Էջմիածնի Ուրհայեցւոյ։ Այբուբենիւ ճառիւք եւ կրկին գանձիւք եւ տաղիւք, ասացեալ յաշակերտէ նորուն Դրիգորի վարդապետի կեսարացւոյ, որ երեք անգամ պատրիարք նստաւ ի Կոստանդնուպոլիս եւ անդ թաղեցաւ ի Գալաթիայ*»(2)։

3. Թղ. 48ա–52բ. «*Մովսէս միոյ տեղեաւ Տաթեւացի սակաւ բան. համեմատութիւն աշակերտի առ վարժապետ որպէս բազմաց մի եւ սոսկ*»(3)։

4. Թղ. 66ա–69բ. «*Գանձ ի վերայ Տեառն Մովսէս կաթուղիկոսի եւ Դրիգոր մեծ վարժապետի։ Ասացեալ Յակոբ վարդապետի Ջուղայեցւոյ*» (Զէյթուն էր յետոյ անուանուած է) «*որ կաթողիկոս եղեւ*»։

Թղ. 33բ. *Սոսկաւ կայ ընդօրինակողին յիշատակագրութիւնը.* «*Եւ զեղկելի գրոցս Ամբակում դպրիկս (յիշեցէք). եւ որք յիշեալ լինիջիք եւ վարձս ի Քրիստոսէ առնուցուք։ ամէն։ ամէն։ Ամէն*»(4)։ *Միևնոյն յիշատակագրութիւնը կրկնուած է չորրորդ գանձի վերջը (թղ. 69բ), բայց եաքէն քերուած ըլլալով անընթեռնելի եղած է։*

---

(1) Ներբողեանս քաղուածաբար տպուած է հանգուցեալ Տ. Բարգէն կաթողիկոսի **Պատմութիւն Սիսիկիոյ կաթողիկոսաց** աշխատութեան մէջ (էջ 267-277), որ մամլոյ տակ է այժմ։

(2) Հմմտ. Ա. Ալպոյաճեան, **Գրիգոր Նեսարացի Պատրիարք**, տպ. երուսաղէմ, 1936, էջ 183-4։

(3) Ողբս ամբողջութեամբ հրատարակած է Հ. Ակինեան, համեմատելով մեր սոյն օրինակին և շաւարշ վրդ. Սահակեանի օրինակին հետ։ Տե՛ս **Մովսէս Գ. Տաթեւացի**, Վիեննա, 1936, էջ 409-424։

(4) Հմմտ. Հ. Ն. Ակինեան, **Զէյթուն**, էջ 37 և 38։